ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2018թ. թիվ 366-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 75-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 9, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի և ծնողական խորհրդի նախագահի 13.11.2018թ. գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ մասում «Մանուկյան Արմենուհի» բառերը փոխարինել «Սահակյան Անի» բառերով, «Ոսկանյան Թագուհի» բառերը՝ «Նաջարյան Գայանե» բառերով, իսկ «Մինասյան Արմենուհի» բառերը՝ «Ոսկանյան Էդվարդ» բառերով:

11/21/2018

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2018թ. նոյեմբերի 20
ք.Վանաձոր